ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզպետ Վահե Ղալումյանի՝ ս/թ սեպտեմբերի 27-29-ը Ուկրաինայի Հանրապետության Չերկասկի մարզ գործուղման արդյունքների մասին

Վահե Ղալումյան – ՀՀ Տավուշի մարզպետ

2018թ սեպտեմբերի 27-29-ը Ուկրաինայի Հանրապետության Չերկասկի մարզ:

''Իմ քայլը հանուն Տավուշի'' մարզային գործարար համաժողովի շրջանակներում՝ Ուկրաինայի Հանրապետության Չերկասկի մարզում գործունեություն իրականացնող ''Զոլոտոնոշսկի բեկոն'' ՍՊԸ հիմնադիր գործարար Անդրանիկ Ղազարյանի հրավերով:

Այցը նպատակ էր հետապնդում, տեղում ծանոթանալ գյուղատնտեսության բնագավառում, Ուկրաինայում ավելի քան 10 տարի գործունեություն իրականացնող ''Զոլոտոնոշսկի բեկոն'' ՍՊԸ աշխատանքներին, ուսումնասիրել նրանց փորձը, ինչպես նաև քննարկել ՀՀ Տավուշի մարզում նախատեսվող ներդրումային ծրագրերը: Կազմակերպությունը հիմնականում զարգացած է խոզաբուծության և կերի արտադրության բնագավառներում՝ արտադրական հզորությունը կազմում է 4000 գլուխ խոզ, ինչպես նաև կերի արտադրության համար մշակվում է՝ շուրջ 20.0 հազ հա հողատարածք:

Հանդիպումների ընթացքում քննարկվեցին գյուղատնտեսության՝ մասնավորապես խոզաբուծության և կերային մշակաբույսերի արտադրության բնագավառներում ՀՀ Տավուշի մարզում նախատեսվող ներդրումային ծրագրերը:

Հանդիպումների ընթացքում քննարկվեցին ՀՀ Տավուշի մարզում նախատեսվող ներդրումային ծրագրերը: Նախատեսվում է մարզում կառուցել ժամանակակից արդյունաբերական խոզաբուծական համալիր՝ 630 խոզամայրի համար: Ծրագրի իրականացման ընթացքում պայմանագրեր են կնքվելու շուրջ 40 ֆերմերային տնտեսությունների հետ, որոնք զբաղվելու են խոճկորների աճեցմամբ /ֆերմերային տնտեսությունները կապահովվեն համապատասխան կերային բազայով/, իսկ արտադրված միսը կհանձնվի համալիրին:

Այցի ընթացքում Տավուշի մարզպետ Վ. Ղալումյանի և ''Զոլոտոնոշսկի բեկոն'' ՍՊԸ-ի միջև, կնքվել է համագործակցության հուշագիր՝ 5 /հինգ/ տարի ժամկետով, վերոնշյալ ծրագրերի իրականացման նպատակով:

Ծրագրի իրականացման բոլոր նախագծա-նախահաշվային փաստաթղթերը պատրաստ են, այժմ աշխատանքներ և ուսումնասիրություններ են կատարվում ՀՀ օրենսդրության շրջանակներում համապատասխան հողատարածքներ ձեռք բերելու ուղղությամբ:

Նշված ծրագրով մարզում հիմք է դրվում ինտենսիվ խոզաբուծության զարգացման ուղղությամբ, շուրջ 40 ֆերմերային տնտեսություններ կապահովվեն մշտական աշխատանքով /հետագայում ֆերմերային տնտեսությունները կավելանան/, կավելանա խոզերի գլխաքանակը /որակյալ նոր ցեղատեսակների/, կտրուկ կաճեն մշակվող գյուղատնտեսական հողատարածքների քանակը, ինչպես նաև տեղական և միջազգային շուկա կարտահանվի որակյալ, էկոլոգիապես մաքուր մսամթերք:

ՀՀ Տավուշի մարզպետ Վահե Ղալումյան

03.10.2018թ